Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**
**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 01-06-2020 թ. որոշմամբ**
**«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱՐԴԱՆԱՆՑ 9 4 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 286.160.04523 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2002-04-01 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 02561757 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)94204017 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | lamirbekyan@yahoo.co.uk |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Մարիետա Հովհաննիսյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 1 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ծրագրի անվանումը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Վարձակալության վճար | 3600000 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | | |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 0 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |

Digitally signed by SAHAKYAN MATEVOS 2214640223
Date: 2020.06.30 14:41:17 AMT

| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
|---|---|---|
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 3357164 | |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 0 | |

**Նշումներ՝**

| |
|---|
| Գումարները գոյացել են Ձեռնարկատիրական գործունեությունից , մասնավորապես վարձակալական վճարից: |

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___4___թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

# «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## 2019թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, տարածք 54, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.auditservice.am

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

## ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ <<Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար>> բաժնում: Անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմանդրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինսանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող

հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 30.06.2020թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Տնօրեն՝ Գոռ Դավթյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "P K F AUDIT SERVICE" 00419022

Որակավորված աուդիտոր՝ Անահիտ Միրզոյան

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» Հիմնադրամ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ՝ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

| | 31.12.2019 | 31.12.2018 |
|---|---|---|
| ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Հիմնական միջոցներ | 12,139 | 13,784 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 57 | 29 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 12,196 | 13,813 |
| ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 0 | 0 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 300 | 300 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեին | 230 | 0 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 5,200 | 4,957 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 5,730 | 5,257 |
| Ընդամենը ակտիվներ | 17,926 | 19,070 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 12,139 | 13,784 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 12,139 | 13,784 |
| ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 115 | 155 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 0 | 50 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին աշխատավարձի գծով | 0 | 104 |
| Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ | 286 | 143 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 401 | 452 |
| Ընդամենը պարտավորություններ | 12,540 | 14,236 |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | |
| Կուտակված շահույթ | 5,386 | 4,834 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 5,386 | 4,834 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | 17,926 | 19,070 |

Սույն ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են հիմնադրամի ղեկավարության կողմից 16.06.2020թ.:

«Կրթություն հանուն կայուն զարգացման» հիմնադրամ
Տնօրեն՝ Մարիետա Հովհաննիսյան

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ
ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ՝ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

| Հոդվածի անվանում | 2019 | 2018 |
|---|---|---|
| Ստացված հատկացումներ կանոնադրական խնդիրների իրականացման համար | 0 | 0 |
| Ողողակի ծախսեր | 0 | 0 |
| **Համախառն արդյունք** | 0 | 0 |
| Վարչական ծախսեր | (2,730) | (916) |
| **Հիմնակ. գործ. ստացված արդյունք** | **(2,730)** | **(916)** |
| Գործ. գործունեությունից այլ եկամուտներ | 3,600 | 3,600 |
| Շնորհներից հիմնական միջոցների ամորտիզացիա | 1,646 | 1,680 |
| Շնորհներից հիմնական միջոցների ամորտիզացիա | (1,646) | (1,680) |
| Գործ. գործունեության այլ ծախսեր | (143) | (1,800) |
| **Գործ. գործունեության ընդհ. արդյունք** | **727** | **884** |
| Այլ ոչ գործ. գործունեությունից ստացված շահույթ | 0 | 0 |
| **Տարվա արդյունք** | **727** | **884** |
| Արդյունքը մինչև շահութահարկի հատկացումը | 727 | 884 |
| Շահութահարկի գծով ծախս | (175) | (214) |
| **Զուտ արդյունքը շահութահարկի հատկացումից հետո** | **552** | **670** |

Սույն ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են հիմնադրամի ղեկավարության կողմից 16.06.2020թ.:
«Կրթություն հանուն կայուն զարգացման» Հիմնադրամ

Տնօրեն՝ Մարիետա Հովհաննիսյան

02561757
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД
FOUNDATION

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2019թ.-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ
ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ՝ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

| Տողի համար | Սեփական կապիտալի տարրերի անվանում | Կանոնադրական կապիտալ | | | Չբաշխված շահույթ (ՎՆԱՍ) | Վերագնահատումից տարբերություններ | Ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կանոնադրական կապիտալ | Հետգնված կապիտալ | Զուտ ԳՈՒՄԱՐ | | | |
| 1 | Մնացորդը ֆին. տարվա սկզբում առ 01.01.2018 | | | | 4,085 | | 4,085 |
| | Մնացորդի ճշտում | | | | 79 | | 79 |
| 2 | Հաշվետու տարվա զուտ շահույթ (Վնաս) | | | | 670 | | 670 |
| 3 | Ներքին շարժեր | | | | 0 | | 0 |
| 4 | Մնացորդը ֆին. տարվա վերջում առ 31.12.2018թ. | | | | 4,834 | | 4,834 |
| 5 | Մնացորդը ֆին. տարվա սկզբում առ 01.01.2019 | | | | 4,834 | | 4,834 |
| 6 | Հաշվետու տարվա զուտ շահույթ (Վնաս) | | | | 552 | | 552 |
| 7 | Ներքին շարժեր | | | | 0 | | 0 |
| 8 | Մնացորդը ֆին. Տարվա վերջում առ 31.12.2019թ. | | | | 5,386 | | 5,386 |

Սույն Ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են հիմնադրամի ղեկավարության կողմից 16.06.2020թ.:

«Կրթություն հանուն կայուն զարգացման» հիմնադրամ

Տնօրեն՝ Մարիետա Հովհաննիսյան

02561757
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД
FOUNDATION

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ
ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ՝ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

| ՀՈԴՎԱԾԻ ԱՆՎԱՆՈՒՄ | 2019 | 2018 |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| Հատկացումներ կանոնադրական խնդիրների լուծման համար | 0 | 0 |
| Գործառնական այլ գործունեություններից մուտքեր | 3,600 | 3,300 |
| Ընդամենը մուտքեր | 3,600 | 3,300 |
| Նյութերի, ապրանքների ձեռքբերման համար | 0 | 0 |
| Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերման համար | (830) | (530) |
| Վճարումներ աշխատակիցներին (վճարված աշխատավարձ) | (1,478) | (1,270) |
| Հարկեր, պարտադիր վճարներ | (959) | (496) |
| Գործառնական այլ գործ. ելքեր | (90) | (86) |
| Կանոնադրական խնդիրների իրականացման համար վճարումներ | 0 | 0 |
| Ընդամենը ելքեր | (3357) | (2,382) |
| Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր | 243 | 918 |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 243 | 918 |
| Դրամական միջոցների մնացորդը տարվա սկզբում | 4,957 | 4,039 |
| Դրամական միջոցների մնացորդը տարվա վերջում | 5,200 | 4,957 |

Սույն ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել ենհիմնադրամի ղեկավարության կողմից 16.06.2020թ.:

«Կրթություն հանուն կայուն զարգացման» հիմնադրամ

Տնօրեն՝ Մարիետա Հովհաննիսյան

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2019թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կրթություն հանուն կայուն զարգացման»հիմնադրամը (այսուհետ՝Հիմնադրամ) իրավաբանական անձ է, որը Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի և Կանոնադրության՝ իրավունք ունի իրականացնել հիմնադրամի գործունեություն:

Հիմնադրամի պետական ռեգիստրում գրանցման համարն է՝ 28616004523, ՀՎՀՀ-ն՝ 02561757:

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է համաձայն հոգեբարձուների խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի:

Հիմնադրամը հիմնադրված է անորոշ ժամկետով: Հիմնադրամը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վարդանանց 9, բն. 4:

1.2. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

ՀՀ Գործարար միջավայր

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն:

Բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սկզբնական արժեքի հիմունքով:

Գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների

ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով:

Դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

## 3.ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

## 4.ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄ

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են սկզբնական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Սկզբնական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելության դեպքում՝ սկզբնական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրություններում:

Ա)Հիմնական միջոցներ
Հիմնական միջոցների սկզբնական արժեքը ընդգրկում է՝

1) Գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները:
2) Ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշված նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում:

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչման ամսաթվի դրությամբ

անհապաղ վճարման գնի համարժեքն է: Երբ վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է որպես տոկոսային ծախս՝ հետաձգված ժամկետի ընթացքում:

Բ) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Իրական արժեքը որոշվում է բացահայտման նպատակների համար:

## 5.ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Կազմել են 2,730,190 դրամ, այդ թվում՝

- Աուդիտորական և հաշվապահական ծառայությունների ծախսեր՝ 780,000 դրամ
- Բանկային ծառայությունների ծախսեր՝ 5,600 դրամ
- Չփոխհատուցվող հարկերից ծախսեր՝ 60,090 դրամ
- Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր՝ 84,500 դրամ
- Տնօրենի աշխատավարձ՝ 1,800,000 դրամ

## 6.ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Համաձայն «Կրթություն հանուն կայուն զարգացման» հիմնադրամի և «Գլոբալ ԱՅ ԹԻ» ՍՊԸ-ի միջև 12/04/2016թ. կնքված տարածքի վարձակալության պայմանագրի՝ 12 ամսվա վարձակալության վճար՝ 3,600,000 դրամ

## 7.ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

| | |
|---|---|
| Չօգտագործված արձակուրդի գումար | 142,857 դրամ |
| Հիմնական միջոցների ամորտիզացիա | 1,645,749 դրամ |
| Շնորհի արտացոլում նվազեցված մաշվածության ծախսի ձևով | (1,645,749) դրամ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | **142,857 դրամ** |

## 8.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

հազար դրամ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ

| | Շենք | Փոխադրամիջոց | Այլ Հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Առ. 01.01.2019 | 32,915 | 15,553 | 1,411 | 49,879 |
| Ավելացում | 0 | 0 | 0 | 0 |
| Դուրսգրում | 0 | 0 | 0 | 0 |
| Առ. 31.12.2019 | 32,915 | 15,553 | 1,411 | 49,879 |

ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ

| | Շենք | Փոխադրամիջոց | Այլ Հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Առ. 01.01.2019 | 19,131 | 15,553 | 1,411 | 36,095 |
| Ավելացում | 1,646 | 0 | 0 | 1,646 |
| Դուրսգրում | 0 | 0 | 0 | 0 |
| Առ. 31.12.2019 | 20,776 | 15,553 | 1,411 | 37,740 |

ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԱՐԺԵՔ

| | Շենք | Փոխադրամիջոց | Այլ Հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Առ. 01.01.2019 | 13,784 | 0 | 0 | 13,784 |
| Առ. 31.12.2019 | 12,139 | 0 | 0 | 12,139 |

## 9.ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԲՅՈՒՋԵԻՆ

| | 31.12. 2019թ. |
|---|---|
| Գույքահարկի գծով | 33,932 դրամ |
| Դրոշմանիշային վճար | 1,000 դրամ |
| Շահութահարկի գծով | 80,447 դրամ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 115,379 դրամ |

## 10.ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

| | 31.12. 2019թ. |
|---|---|
| Կանխիկը դրամարկղում | 486 դրամ |
| Բանկային հաշիվների մնացորդներ | 5,199,529 դրամ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 5,200,015 դրամ |

## 11.ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԳԾՈՎ

| | 31.12. 2019թ. |
|---|---|
| Աշխատակիցներին աշխատավարձի գծով | 0.00 դրամ: |

## 12.ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

հազար դրամ

| N | Հոդվածի անվանում | Հաշվետու տարի | |
|---|---|---|---|
| | | 2019թ. | 2018թ. |
| 1 | Ընթացիկ պարտավորություն շահութահարկի գծով | (204) | (243) |
| 2 | Հետաձգված հարկի գծով փոխհատուցում | 29 | 29 |
| Ընդամենը | | (175) | (214) |

## 13.ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

### Ա) Շրջակա միջավայրի պահպանություն

Հիմնադրամը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները կապված շրջակա միջավայրի հետ: Կապ չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

### Բ) Գործարքներ կապակցված կողմեր

Առ 31/12/2019թ.-ը Հիմնադրամը չունի կապակցված կողմեր:

### Գ) Վերահսկողություն

Հիմնադրամը դուստր կամ ասոցիացված կազմակերպություններ չունի, չունի նաև համատեղ վերահսկվող միավորներ:

### Դ) Ապահովագրություն

ՀՀ-ում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ,որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում,դեռ չեն կիրառվում ՀՀ-ում:Հիմանադրամը չունի ամբողջական ապահովագրություն իր ամբողջ ունեցվածքի համար,ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից,որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյության և ֆինանսական վիճակի վրա:

Ե) Հարկային պարտավորություններ

Հարկային պարտավորությունները ՀՀ-ում

ՀՀ-ի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով,որոնք հաճախ հստակ չեն,հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը ՀՀ-ում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ ՀՀ-ի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել հիմնադրամի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Սույն Ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են հիմնադրամի ղեկավարության կողմից 16.06.2020թ.:

«Կրթություն հանուն կայուն զարգացման» հիմնադրամ

Տնօրեն՝ Մարիետա Հովհաննիսյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2020 14:32